Փոխարժեքի փոխկապվածությունը մակրոտնտեսական ցուցանիշների հետ ՀՀ օրինակով

Ասլանյան Գ. Ս.
ՀՊՏՀ, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի մագիստրանտ
(Երևան, Հայաստան)
GevorkAslanyan@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ արժույթ, արտարժույթ, արտարժույթի փոխարժեք, արժեզրկում, արժևորում, ներդրումներ, արտահանում, ներմուծում, գնաճ

Взаимосвязь валютного курса с макроэкономическими показателями на примере РА

Асланян Г. С.
АГЭУ, магистр кафедры экономико-математических методов (Ереван, Армения)
GevorkAslanyan@yandex.ru

Резюме: Валютный курс играет важную роль в экономике и влияет практически на все макроэкономические процессы. В данной статье представлена связь обменного курса с несколькими макроэкономическими показателями. На примере РА иллюстрируется как меняются объемы импорта и экспорта в зависимости от колебаний обменного курса. А также, представлена взаимосвязь между показателями инфляции, экспорта и импорта. Исследована структура иностранных инвестиций и их изменения в последние годы.
Ключевые слова: валюта, иностранная валюта, курс иностранной валюты, девальвация, ревальвация, инвестиции, экспорт, импорт, инфляция

The relationship between exchange rate and macroeconomic indicators by the example of RA

Aslanyan G. S.
ASUE, master at chair of Mathematical Methods in Economics (Yerevan, Armenia)
GevorkAslanyan@yandex.ru

Abstract: The exchange rate of the foreign currency plays an important role in the economy and affects almost all macroeconomic processes. This article describes the relationship between currency exchange rate and a range of macroeconomic indicators. It has been demonstrated on the example of the Republic of Armenia how the import and export indicators vary depending on exchange rate fluctuations. The correlation between the indicators of inflation, export and import has also been presented. The structure of foreign investments and their changes in recent years have been studied, as well.
Keywords: currency, foreign currency, currency exchange rate, devaluation, revaluation, investments, export, import, inflation

ՄՏՀ-ների առավել շարժուն ձևերից են միջազգային արժութային հարաբերությունները, որոնք ծագել են աշխարհատնտեսական բազմաբնույթ հարաբերությունների ժամանակ փողն օգտագործելիս: Ազգային արժույթը գործում է երկրի ներսում, որտեղ սպասարկում է ներքին շուկան, ներքին դրամաշրջանառությունը, այսպես ասած՝ ներքին տնտեսական գործարքները: Միջազգային արտարժույթը գործում է երկրի սահմաններից դուրս, սպասարկում է համաշխարհային շուկան, համաշխարհային դրամաշրջանառությունը կամ համաշխարհային տնտեսական գործարքները: Արտարժույթ ասելով հասկանում ենք [**1**].

- Տարբեր երկրների դրամական միավորները և դրանց տարատեսակները.
- Դրանցով արտահայտված և միջազգային հաշվարկներում օգտագործվող վարկային միջոցները
- Միջազգային դրամական միավորները:

Արժույթի փոխարժեքը մեկ երկրի դրամական միավորի գինն է՝ արտահայտված այլ երկրի դրամական միավորով: Արտարժութային փոխարժեքը կարևոր դեր է խաղում տնտեսության մեջ և ազդում մակրոտնտեսական գրեթե բոլոր գործընթացների վրա [**1**]:

Ինչպե՞ս են Հայաստանում ձևավորվում դրամի նկատմամբ հիմնական արտարժույթների, օրինակ ԱՄՆ դոլարի, եվրոյի կամ ՌԴ ռուբլու փոխարժեքները:

Առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների համար ուղենիշ հանդիսացող փոխարժեքների հաշվարկը սկսվում է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի որոշումից: Ընդհանուր առմամբ, Կենտրոնական բանկը հրապարակում է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի օրական միջին շուկայական արտարժութային փոխարժեքը, որը հաշվարկվում է որպես ֆինանսական շուկայում իրականացված առքի և վաճառքի գործառնությունների միջին կշռված փոխարժեք: Հաշվարկի մեջ ներառվում են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների՝ նախորդ օրվա 14:30-ից մինչև հաշվետու օրվա 14:30-ը, ինչպես նաև արտարժութային բորսայում հաշվետու աշխատանքային օրվա ընթացքում (11:00-ից մինչև 15:00) իրականացված գործարքները [**9**]:

Այլ արժույթների նկատմամբ փոխարժեքը սահմանվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ կրոս-փոխարժեքների միջոցով, որոնց վերաբերյալ տվյալները ստացվում են Բլումբերգ[1] տեղեկատվական համակարգերից:

Ամսական միջինը հաշվարկվում է աշխատանքային օրերի փոխարժեքների միջինի հիման վրա, իսկ եռամսյակային միջինը՝ ամսական միջինների հիման վրա:

Արժութային շուկան ենթակա է առաջարկի և պահանջարկի փոփոխություններին, որոնք արտահայտվում են արժույթի փոխարժեքի տատանման միջոցով: Դիտարկենք այն գործոնները, որոնք ազդում են այդ տատանումների վրա [**6**].

- Առաջին հերթին պետք է նշել տվյալ երկրի **փողային զանգվածի** հարաբերական քանակը: Ինչքան շատ է արժույթը շրջանառության մեջ, այնքան ցածր է նրա արժեքը: Արժույթի վրա կարող են ազդել նաև փողային հիպերինֆլիացիան, կառավարության քաղաքականությունը մասնավոր ֆինանսական ակտիվների նկատմամբ, կառավարության սահմանափակումները և հարկերը, տարբեր քաղաքական իրադարձությունները և այլն:
- Փոխարժեքը կախված է նաև պաշտոնական արժութային շուկայում **ինտերվենցիաներից**:
- Էական ազդեցություն ունի շուկայի վրա **վճարման բալանսը**: Վճարման բալանսի կարևորագույն մասերից մեկն է **առևտրային հաշվեկշիռ**: Նրա մեջ են արտացոլվում էքսպորտը, իմպորտը և ռեէքսպորտը: Եթե հաշվեկշռի մնացորդը բացասական է, ապա աճում է արտարժույթի պահանջարկը, և իջնում է ազգային արժույթի փոխարժեքը և, ընդհակառակը. ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը խթանում է արտահանողներին և բացասական ազդեցություն ունենում ներմուծողների համար: Այս երևույթը մեծացնում է երկրի արտահանումը, կրճատում՝ ներմուծումը, որի հետևանքով հնարավոր է հասնել երկրի առևտրային հաշվեկշռի դրական մնացորդի առաջացման:
- Երբ երկիրը ավելի շատ ծախսում է քան ստանում է, ազգային արժույթի փոխարժեքը իջնում է:
- **Սպառողների ճաշակի փոփոխությունը:** Սպառողների ճաշակների փոփոխությունը այլ երկրի արտադրանքի նկատմամբ, հանգեցնում է այդ երկրի արժույթի նկատմամբ պահանջարկի մեծացմանը, ինչպես նաև փոխում է դրա փոխարժեքը:
- **Եկամուտների հարաբերական փոփոխությունը:** Եթե որև երկրի ազգային եկամտի աճը գերազանցում է այլ երկրի ազգային եկամտի աճի ցուցանիշը, ապա նրա ազգային արժույթի փոխարժեքը կիջնի: Պետության ներմուծումները ուղիղ համեմատական են նրա ազգային եկամտին
- **Գների հարաբերական փոփոխությունը:** Եթե ՀՀ-ում գները բարձրանում են, իսկ ՌԴ-ում մնում են նույնը, ապա ՀՀ-ի սպառողները կձգտեն գնել համեմատաբար ավելի էժան ռուսական ապրանքներ, դրանով իսկ ավելացնելով ռուբլու նկատմամբ պահանջարկը:
- **Հարաբերական իրական տոկոսադրույքը:**
- **Սպեկուլյացիա**

Հաշվի առնելով, որ համատեղ առևտրի մեջ ընդգրկված երկրներում գների մակարդա-

[1] *Բլումբերգը հանդիսանում է ֆինանսական տեղեկատվության մատակակար և մշակող հանդիսացող աշխարհի առաջատարներ կազմակերպություններից մեկը: Ստեղծվել է 1981-ին, ԱՄՆ-ում:[10]*

կի փոփոխությունն ազդում է ապրանքների և ծառայությունների մրցունակության վրա, հետևաբար այն ազդում է նաև արտաքին առևտրի վրա, այն է երկրների վճարային հաշվեկշռի վրա: Բավական է նշել այն հանգամանքը, որ տվյալ երկրից ապրանքների և ծառայությունների արտահանումն ավելացնում է ազգային արժույթի նկատմամբ պահանջարկն արտերկրում և միաժամանակ ձևավորում է արտերկրյա արժույթի առաջարկը տվյալ տնտեսության մեջ:

Գծապատկեր 1-ում համատեղ դիտարկել ենք ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար անվանական միջին փոխարժեքի արժեզրկման և առևտրային հաշվեկշռի դինամիկան: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից 2013-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքն արժեզրկվել է 2 տոկոսով՝ 2012-ի 401.8 դրամից 2013-ին հասնելով 409.6 դրամի: Միևնույն ժամանակ, արտահանումը դոլարային արտահայտությամբ աճել է 8.6 տոկոսով, որը Հայաստանի համար բավականին բարձր ցուցանիշ է: Ի հակադրություն դրան՝ ներմուծումը 2013-ին աճել է ընդամենը 0.2 տոկոսով: Արդյունքում, առևտրային հաշվեկշռի բարելավումը նպաստել է ընթացիկ հաշվի բարելավմանը: 2014թ. արժութային ճգնաժամից հետո 2015թ. ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքն արժեզրկվել է 14.9 տոկոսով՝ 2014-ի 415.9 դրամից 2015-ին հասնելով 477.9 դրամի: Արտահանումը դոլարային արտահայտությամբ նվազել է 5.5 տոկոսով, իսկ ներմուծումը 22.8 տոկոսով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ արտասահմանից գնված ապրանքները 2015-ին Հայաստանում կարժենար ավելի թանկ քան 2014-ին: 2016թ. տեղի է ունեցել արտահանման աճ 15.2 տոկոսով, և ներմուծման աճ ընդամենը 1 տոկոսով, որն էլ հանգեցրել է առևտրային հաշվեկշռի բարելավմանը 20.8 տոկոսով(ՖՕԲ գներով):

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից 2008-ին դրամի անվանական փոխարժեքի արժեքավորումը ներմուծման ծավալների վրա իր ազդեցությունը ունեցել է հենց 2008-ին, մինչդեռ արտահանման վրա ազդեցությունը իրեն զգացնել է տվել մոտ 1 տարի անց: Մյուս կողմից, 2009-2013 թվականներին դրամի փոխարժեքի արժեզրկումը ուղեկցվել է արտահանման ծավալների աճով, որը բնական է, սակայն աճել են նաև ներմուծման ծավալները: 2014-2015թթ դրամի արժեզրկումից հետո 2015թ. ներմուծումը կտրուկ է նվազել, իսկ արտահանումը ոչ այնքան շոշափելի չափով: 2015-2018թթ. դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ համեմատաբար կայուն է եղել, 2015-ի անկումից հետո ՀՆԱ-ն նորից սկսել է աճել, տնտեսությունը եղել է կայուն վիճակում և վերականգնվել է նախաճգնաժամային վիճակը:

Գծապատկեր 3-ում ներկայացված է ՀՀ ներմուծման ցուցանիշները ըստ երկրների (ներկայացվել են ըստ ներմուծման առաջին չորս երկրները): Նկատում ենք, որ տեղի է ունեցել 2015թ. անկումից հետո, ինչի պատճառները տարբեր են: Իրանի դեպքում կարելի է նշել այդ երկրի նկատմամբ կիրառվող միջազգային ֆինանսատնտեսական պատժամիջոցները, որի արդյունքում Իրանի համար կարևոր գործընկեր է դարձել Հայաստանը: ՌԴ–ի դեպքում ներմուծման աճը կարելի է կապել տարբեր հանգամանքների հետ. Հայաստանը և Ռուսաստանը գտնվում են միևնույն տնտեսական միության մեջ, ռուբլի համեմատաբար արժեզրկվել է դրամի նկատմամբ և ռուսական ապրանքները ավելի էժան են հայերի համար:

Քննարկման մեջ ավելացնենք, նաև միջին գնաճի ցուցանիշները: Գծապատկեր 4-ից երևում է, որ Հայաստանում բարձր գնաճը 2007-2011թթ առավելապես նպաստել է ապրանքների ներմուծման աճին:

Այսպիսով, արտահանող երկրում գնաճի բարձր տեմպերն առևտրային հաշվեկշռի վրա ունեն նույն բացասական ազդեցությունը ինչ և ազգային արժույթի անվանական փոխարժեքի արժևորումը: Ուստի հենց իրական փոխարժեքն է, որ գնահատում է երկրի մրցունակությունն ապրանքների և ծառայությունների միջազգային շուկաներում: Իրական փոխարժեքի արժեզրկումը նշանակում է, որ արտերկրի ապրանքներն ու ծառայությունները առավել թանկ են տեղականների համեմատ, ինչը տեղական ապրանք-ծառայությունների արտահանման համար խթան կհանդիսանա: Եվ հակառակը, իրական փոխարժեքի արժեքավորումը վկայում է երկրի մրցունակության

Գծապատկեր 1. Առևտրային հաշվեկշռի և ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար անվանական միջին փոխարժեքի հավելաճի տեմպը 2004-2014 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՎԿ, ՏՁՀԿ [**5**, **9**, **3**, **8**, **2**, **10**]:

Գծապատկեր 2. Արտահանման և ներմուծման ցուցանիշները և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ [**9**]:

Գծապատկեր 3. ՀՀ Ներմուծման ցուցանիշները ըստ երկրների



Աղբյուրը՝ [**12**]

Գծապատկեր 4. Արտահանման և ներմուծման ցուցանիշները և միջին գնաճը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ [**9**] և [**13**]

նվազման մասին և նպաստում է ներմուծման աճին [**7**]:

Փոխարժեքն ազդում է նաև կապիտալի միջազգային հոսքերի ուղղության վրա: Ուսումնասիրենք դեպի Հայաստան օտարերկրյա ներդրումների դինամիկան և կապենք այն փոխարժեքի վարքագծի հետ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում օտարերկյա ներդրումների ծավալները փոքր են՝ ՀՆԱ-ի 6-ից 11 տոկոսի միջակայքում, բացառությամբ 2015թ.՝ 3.9% (տե՛ս գծապատկեր 5): Դրանք իրենց առավելագույն մակարդակին հասել են 2008-ին, որից հետո շարունակական և կտրուկ անկում են ապրել: 2014-ին ընդամենը օտարերկրյա ներդրումները կազմել են ՀՆԱ-ի 7.2 տոկոսը (կամ 840 միլիոն դոլար), որից ուղղակի ներդրումները կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 2.6 տոկոսը (կամ 307 միլիոն դոլար): 2015թ., կախված արժութային ճգնաժամից, մոտ 46 տոկոսով նվազել են ընդհանուր ներդրումները, և մոտ 61 տոկոսով ուղղակի ներդրումները: Սակայն դրանից հետո 2016թ. ներդրումները կտրուկ աճել են, իսկ 2017-ին մի փոքր նվազել: Կարելի է նկատել որ փոխարժեքի դինամիկան հաճախ հակադարձ է ներդրումների դինամիկային: Օրինակ 2008թ. ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը նվազել է 10.5 տոկոսով, իսկ ներդրումները աճել են 48.8 %-ով: Ինչպես նաև 2015թ. դրամի արժեզրկման հետ մեկտեղ ներդրումները նվազել են 46%:

Օտարերկյա ներդրումների դինամիկան մեծապես պայմանավորված է եղել ռուսական ներդրումներով, որոնք իրենց առավելագույն մակարդակին են հասել 2008-ին, որից հետո զգալիորեն նվազել են՝ հատկապես վերջին տարիներին: 2014-ին ՌԴ-ից ներդրումների հոսքը նորից ավելացել է՝ կազմելով ընդհանուր ներդրումների 37 տոկոսը: 2014-ին ՌԴ ներդրումների հիմնական մասը՝ 86 տոկոսը, իրականացվել է էներգետիկայի ոլորտում, իսկ 12 տոկոսը՝ հեռահաղորդակցության: 2015թ. Ռուսաստանից ներդրումները ևս նվազել են ինչպես քանակապես, այնպես էլ ընդհանուրի մեջ մասնաբաժնով: Այսպիսով 2015թ. Ռուսաստանից կատարված ներդրումները 2014-ի համեմատ նվազել են մոտ երկու անգամ, իսկ ընդհանուրի մեջ մասնաբաժինը կազմել է մոտ 26 տոկոս: 2016թ. ներդրումները կրկնակի աճ են գրանցել 2015թ. նկատմամբ և գերազանցել են 2014թ. ցուցանիշները:

Այսպիսով պարզեցինք, որ փոխարժեքի տատանումները էականորեն ազդում են մակրոտնտեսական որոշ ցուցանիշների վրա: 2013-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքն արժեզրկվել է 2 տոկոսով՝ 2012-ի 401.8 դրամից 2013-ին հասնելով 409.6 դրամի: Միևնույն ժամանակ, արտահանումը դոլարային արտահայտությամբ աճել է 8.6 տոկոսով: Ի հակադրություն դրան՝ ներմուծումը 2013-ին աճել է ընդամենը 0.2 տոկոսով: Արդյունքում, առևտրային հաշվեկշռի բարելավումը նպաստել է ընթացիկ հաշվի բարելավմանը: Արտահանող երկրում գնաճի բարձր տեմպերն առևտրային հաշվեկշռի վրա ունեն նույն բացասական ազդեցությունը ինչ և ազգային արժույթի անվանական փոխարժեքի արժևորումը: Օրինակ Հա-

Գծապատկեր 5. Օտարերկրյա ընդամենը և ուղղակի ներդրումները Հայաստանում



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ [**3**, **8**, **2**]:

Գծապատկեր 6. Ռուսաստանից և այլ երկրներից կատարվող օտարերկրյա ընդամենը ներդրումները



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՏԶՀԿ [**3**, **8**, **2**]:

յաստանում բարձր գնաճը 2007-2011թթ առավելապես նպաստել է ապրանքների ներմուծման աճին:

Օգտագործված գրականության ցանկ

1. տ.գ.դ., պրոֆ. **Գ.Ե. Կիրակոսյանի և** տ.գ.թ., պրոֆ. **Ի.Ե. Խլղաթյանի** «Տնտեսագիտության տեսություն» (ուսումնական ձեռնարկ), Եր., Տնտեսագետ, 2009. – 752 էջ:
2. **Մ.Թումասյան, Ա.Գրիգորյան, Ե.Մանուկյան և Կ.Հարությունյան**, «Հայաստանի տնտեսական զեկույց 2016», Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն, Երևան, նոյեմբեր 2016, 75 էջ:
3. ՀՀ ՎԿ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2004-2019թ. ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ» տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2004-2019թ:
4. ՀՀ ԿԲ հասարակության հետ կապերի ծառայության հայտարարություն առ նոյեմբերի 24, 2014թ., ԿԲ պաշտոնական կայքէջ,https://www.cba.am/AM/News/Pages/news_07-02-140207-7374.aspx
5. ՀՀ ԿԲ «2015թ վճակագրական տեղեկագիր» Երևան 2016թ, 135 էջ:
6. **Агапова Т.А., Серегина С.Ф.**, “Макроэкономика”: Учебник. – 3-е изд./ Под общей редакцией д.э.н., профессора А.В. Сидоровича. – М.: МГУ им. Ломоносова, Издательство «Дело и Сервис», 2000. – 416 с.
7. **Чепурин М.Н., Киселева Е.А.,** “Курс экономической теории”: учебник – 7-е изд., дополн. и перепраб. – Киров: «АСА», 2010. - 800 с.

Օգտագործված ինտերնետային կայքեր

8. http://armstat.am/am/
9. https://www.cba.am/am/SitePages/statintroduction.aspx
10. http://edrc.am/resources/data-statistics/macroeconomic-data/246-prices-and-rates
11. http://en.wikipedia.org/wiki/Bloomberg_L.P.
12. https://www.trademap.org
13. https://www.macrotrends.net/countries/ARM/armenia/inflation-rate-cpi

Сдана/Հանձնվել է՝ 25.10.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 1.11.2019
Принята/Ընդունվել է՝ 4.11.2019